

# ԱԶԳԱԿ ՅԱՒԵԼՈՒԱԾ

## ՀՅԴ 33-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԻԹՈՎ

ԵՐԵՔԱԲԹԻ, 12 ՄԱՐՏ 2019

### ԱՐԽԻՒԱՅՆԱՑՈՒՄԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՆԷՆ ՄԵԿՆԱԾ

ՀՅԴ 33-րդ Ընդհանուր ժողովին առիթով Արցախի Հանրապետության նախագահի կողմէ ժողովականներուն համար կազմակերպուած ընթրիքը յատկանշական էր Դաշնակցութեան պատմական եւ ժամանակակից դերակատարութեան մասին կատարած գնահատականներով:

Այդ համախմբումի ընթացքին հնչած արժեւորումներուն նիւթերը ՀՅԴ Բիւրոյի հանրային կապերու գրասենեակը տրամադրեց մեզի: Չանոնք կը հրատարակենք այդ բոլորին մէկտեղուած արխիւայնացումը ապահոված ըլլալու նպատակով: Այդ նիւթերու ելեկտրոնային տարբերակները տեղադրուած են ՀՅԴ Բիւրոյի կայքին վրայ:

Որոշ ժամանակի հեռաւորութեամբ, վաղուան ուսումնասիրողը վստահաբար այս հրատարակութեան նիւթերուն մէջ պիտի գտնէ Դաշնակցութեան օրուան մարտահրաւերները, զանոնք դիմակայելու համար ամէն բանէ առաջ կուսակցութեան գաղափարախօսական յենասիւններուն կառչած մնալու համատարած հաւաքական կամքի արտայայտութիւններու թղթածրար մը:

Ընդհանուր ժողովին համար պատմական նշանակութիւն ունեցող վայրը՝ Արցախը Դաշնակցութեան համազգային գործունեութեան մասին իր գնահատականը տուած է Արցախի Հանրապետութեան նախագահով եւ Արցախի հայոց թեմի առաջնորդով:



## ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ. ՊԱՏՊԱՆՆԵՐ ԱՐՑԱԽԻՑ

Արցախում գումարուած ՀՅԴ 33-րդ Ընդհանուր ժողովի պատգամներն ունենին ոչ միայն կուսակցական որոշումների, բանաձեւերի եւ յայտարարութիւնների տեսք, այլեւ՝ ելոյթների, խօսքերի, որոնք հնչեցին տարբեր երկրներից ժամանած ժողովականների եւ հիւրընկալ արցախցիների կողմից: Յունուարի 23-ին Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեանի կողմից ՀՀ Դաշնակցութեան 33-րդ Ընդհանուր ժողովի պատգամաւորների համար տրուած պաշտօնական ընթրիքը իւրայատուկ էր ոչ միայն իր կազմով, այլեւ՝ խորհրդով ու մտայնացմամբ: Արցախի աշխարհիկ, հոգեւոր եւ զինուորական բարձրաստիճան դասի հետ մէկ սեղանի շուրջ էին խմբուել 30 երկրներից ժամանած Դաշնակցութեան շուրջ 100 ներկայացուցիչներ՝ անկեղծօրէն յղելով իրենց խօսքը հայութեանը, հայրենի իշխանաւորներին ու ողջ աշխարհին:

Հանրութեան սեփականութիւնն ենք ցանկանում դարձնել այդ պատգամները, որոնք ամենախօսուն վկայութիւնն են այն իրական մթնոլորտի, որը տիրում էր Դաշնակցութեան բարձրագոյն ժողովում եւ նրանից դուրս:

\*\*\*

### Մեծ է Հայ յեղափոխական դաշնակցութեան դերակատարութիւնը (Հատուած՝ Արցախի նախագահ Բակօ Սահակեանի խօսքից)

«Համամիտ կը լինեք ինձ հետ, եթէ այս երեկոն մենք որակենք մեր հանդիպման եւ այս վերջին օրերի համաժողովի տրամաբանական շարունակութիւնը:

Մեծ է Հայ յեղափոխական դաշնակցութեան դերակատարութիւնը մեր ազգային-ազատագրական պայքարի, հայոց անկախ պետականութեան գարգացման, զօրացման ու պաշտպանութեան, հայրենիք-սփիւռք կապերի ամրապնդման, հայապահպանութեան գործում:

Ես ուզում եմ յաջողութիւն ցանկանալ մեզ եւ ուզում եմ, որպէսզի ձեզ հետ աւելի յաճախ հանդիպենք, յատկապէս այստեղ՝ Արցախում, որովհետեւ ոչ մի վայրում մեր աշխատանքը, մեր մտքերի փոխանակումն այդքան արդիւնաւետ չի լինելու, ինչքան որ Արցախում: Շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ բոլորիդ եւ ամենայն բարիք եմ ցանկանում»:

\*\*\*

### Եթէ հոգով յաղթել ես, մարմինդ կը գնայ եւ յաղթական կնիքը կը դնի (Հատուած՝ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանի խօսքից)

«Այստեղ գտնուողներից շատերին ճանաչում եմ՝ ոմանց 40 տարի, ոմանց՝ 30, ոմանց՝ 25 եւ շատ ուրախ եմ ողջ-առողջ տեսնելով ձեզ եւ տեսնելով ձեզ Արցախում:

Ուրախ եմ, որ դուք մինչեւ այսօր մնացել էք անսակարկ պայքարող: Բարեբախտաբար ոչ մէկիդ մօտ չի պակասել ազատատենչութեան ոգին, որն այսօր խիստ անհրաժեշտ է մեզ:

Ես սիրում եմ երբեմն զուգահեռներ անցկացնել. մեր շարժման 30 տարին լրացաւ անցեալ տարի, Քրիստոսը 30 տարեկանում մկրտուեց, որին հետեւեց սատանայի փորձութիւնը: Բնական է, որ մենք ձեզ հետ փորձութեան շրջանի մէջ պիտի գտնուենք. դա շատ բնական է եւ շատ քրիստոնէական է: Այո՛, երբ շարժումը դառնայ 33 տարեկան, չվախենա՛ք, չսասանուէ՛ք, հնարաւոր է 3 օր խաչելութեան օրեր ապրենք... Ոչի՛նչ, դրանից յետոյ կը գայ յարութիւնը եւ կը գայ համբարձումը. բոլոր դժուարութիւնները մեզ համար են, գաղտնիքը մէկն է՝ չընկճուել: Կը ստիպեն, չվախենա՛ք երբեւիցէ:

Աշխարհի սկզբից կայ հնագոյն օրէնք. եթէ հոգով յաղթել ես, մարմինդ կը գնայ եւ յաղթական կնիքը կը դնի, եթէ հոգով սասանուեցիր, 50 տոկոսով պարտուած ես:

Սա մեր շարժման, մեր յաղթանակի սկիզբն է, եւ դուք, ես էլ ձեզ հետ, 3-4 տարեկանից երազել ենք հայկական յաղթանակը տեսնել, մասամբ տեսել ենք, սա մեր երազանքի ընդամենն առաջին փուլն է: Հայութիւնը պէտք է միաբան լինի, եւ Արցախը պէտք է բռնկեցնի նման լինի. եթէ մենք այսօր Արցախում չբռնկեցնենք, հայութիւնն էլ չմիաբանուի, քամիները, պղտոր ջրեր մեզ կը տանեն: Մենք պատմութիւնից դաս պիտի առնենք: Յաճախ, մարտի դաշտում, յաղթանակ ենք տանում, 1-2 տարի յետոյ սկսում է անձնական նախանձ, իշխանատենչութիւն, ոտքի տակ փորել, եւ սկսում ենք պարտութիւններ կրել, որովհետեւ ներքուստ դառնում ենք անառողջ, պարտուում ենք ներսից, ա՛յ, սա՛՛ երբեւիցէ պիտի թոյլ չտալ, մեր բոլոր անձնական միտումները, ծրագրերը, ցանկութիւնները պիտի մոռանանք: Կայ մէկ՝ համայն հայութեան խնդիր, պետութեան խնդիր, ազգի ճակատագիր, եւ ոչ ոք իրաւունք չունի դա սասանելու՝ անկախ, թէ նա ով է: Մենք, իսկապէ՛ս, ձեզ հետ մեծ անելիք ունենք: Չվախենա՛ք, իշխանափոխութիւն կը լինի, յեղափոխութիւն կը լինի... Այո՛, 88 թուականին էլ աշխարհը մեզ



ղեմ էր, էլի ցեղասպանութիւն արեցին. ամէն ինչ փորձեցին անել՝ շարդել, վախեցնել, ձերբակալել, լոյսը կտրել, ալիւր չտալ, ամիսներով շաքարաւազ չունէինք, ուտելիք չկար, ուղղաթիւն էր մեր փրկիչը: 4 թոնով ի՞նչ պիտի բերես, որ Ղարաբաղ պահես... Բայց պահուե՛ց հերոսութեան, նուիրման ու սրբութեան զգացումի շնորհիւ. այս ամէնը հերոսաբար պահուեց եւ կը պահուի ու կը կուտակուի՝ այսօրուայ եւ վաղուայ համար»:

\*\*\*

**Պայքար, որ դարձրել ենք մեր էութիւնը**  
(Հատուած՝ 337 Բիւրոյի 2000-2019 թթ. ներկայացուցիչ 3րանդ Մարգարեանի խօսքից)

«Մենք այստեղ ենք վկայելու 30 տարուայ ուխտը՝ այն պայքարը, որ դարձրել ենք մեր էութիւնը, դարձրել ենք մեր հիմնական գործը:

Մենք այստեղ ենք՝ իբրեւ ապացոյց, իբրեւ փաստ, որ մենք Արցախի կողքին ենք: Ասելու համար, որ մենք ձեր կողքին ենք՝ ժայռի պէս ամուր մնացեք, միասնական մնացեք, աննահանջ մնացեք, վճռական մնացեք, մենք ձեր կողքին ենք: Սա, կարծում եմ, երկրորդ ամենամեծ խորհուրդն է, որ կայ, եւ պատգամն է, որ ժողովը պիտի փոխանցի:

Մենք այստեղ ենք, որպէսզի ասենք, որ այսօր հայ ազգային մտքի եւ կամքի կենտրոնը Արցախն է, եւ այստեղից է, որ պետք է կարողանանք ապահովել մեր ազգային ուղեգիծը, մեր այդ ազգային ուղեգծի մէջ՝ մեր շարունակականութիւնը: Այստեղից է, որ մենք պետք է կարողանանք սկսել իրականացնել մեր ազգային երազանքը, այստեղից է, որ մենք պետք է չթողնենք որեւէ պարտութիւն, որեւէ սահանջ տեղի ունենայ մեր նորօրեայ, նոր ժամանակների ազատագրական պայքարում:

Մեր համոզմունքը՝ բանալիների բանալին այն է, որ Արցախի հարցը լուծուում է Արցախից սկսած: Եւ այդ բանալին այսօր Արցախի միասնականութիւնն ու վճռականութիւնն է: Արցախը պետք է լինի կուռ, միասնական, վճռական եւ դառնայ այն կենտրոնը, որն իր շուրջ կը համախմբի ամբողջ հայ ժողովրդին: Ես վստահ եմ՝ ամբողջ հայ ժողովուրդը կը համախմբուի Արցախի շուրջ, եթէ Արցախը մնայ միասնական եւ վճռական: Ես դրան հաւատում եմ»:

\*\*\*

**Դաշնակցականներս մեր ժողովրդի բաց ջիղն ենք, որ շատ արագ զգում է՝ ի՞նչ է պետք անել**  
(Հատուած՝ 337 Բիւրոյի նախագահ Արմէն Ռուստամեանի խօսքից)



«Իսկապէս բոլորիս համար պատմական է այս օրը եւ, ինչպէս ասում են, ոչ մի բան պատահական չի լինում: Պատահական չէ, որ Դաշնակցութիւնը որոշեց իր Ընդհանուր ժողովը գումարել Արցախ աշխարհում: Պատահականութիւնը, ինչպէս գիտենք, անհրաժեշտութեան դրսեւորում է: Դրա անհրաժեշտութիւնը մենք զգացինք ոչ անպայման քննարկումների արդիւնքում. բնագործ զգացինք: Մենք՝ դաշնակցականներս, իսկապէս, երեւի մեր ժողովրդի բաց ջիղն ենք, որ շատ արագ զգում է՝ ի՞նչ է պետք անել, որտեղ է վտանգը, ինչ մարտահրաւեր կայ... Եւ զգացինք, որ այսօր մենք պետք է լինենք Արցախում: Մենք մի նոր էջ ենք բացում մեր երկրում՝ Հայաստանում, Արցախում, հայութեան առջեւ: Այսօր հայութիւնն անցում է կատարում մի վիճակից մի այլ վիճակի: Անցումն ինքնին ունի շատ մեծ հնարաւորութիւններ, շատ մեծ յոյսեր, բայց նաեւ կան խութեր, կան դժուարութիւններ: Եւ այսօր Դաշնակցութեան առաքելութիւնը, ընդհանրապէս, հայ ժողովրդի նորօրեայ առաքելութիւնը տեսնում եմ 30 տարի առաջ սկզբնաւորուած արցախեան պայքարի յաղթանակի մէջ, եւ պատահական չէ, որ 30 տարի յետոյ մենք վերահաստատում ենք մեր ուխտը հէնց Արցախում: Մենք այն ժամանակ, երեւի, մի քիչ ուշ եկանք Հայաստան. 1988-ին, երբ սկսուեց շարժումը, Դաշնակցութիւնը փոքր-ինչ յապաղեց: «Դեպի Երկիր» ասաց եւ հասկացաւ, որ դեպի Երկիր պիտի գայ եւ եկաւ: Այսօր մենք իրաւունք չունենք ոչ մի վայրկեան յապաղելու: Բոլոր մարտահրաւերներն ու վտանգները, որ մենք գիտակցաբար, բնագործ կամ պատմական փորձով զգում ենք, առաջինը պետք է լինենք, որ դրա մասին ասենք, ահազանգենք ու միաւորենք մեր ժողովրդին, որ նորից, Աստուած մի՛ արասցէ, այն սխալները, որ գործել ենք, չկրկնենք...»

Այն 42 հազար քառակուսի քիլոմէթր հայկական տարածքը, որ ամէն ինչից վեր է, եւ այս սերունդն է ձեռք բերել, սրա մօտ ոչ մի արժէք չի կարող գերակայ համարուել: Սրա մօտ ամէն ինչ նսեմանում է, սա մեր սերնդի հպարտութիւնն է, դա հայ ժողովրդի հպարտութիւնն է, եթէ չասեմ՝ գոյութեան իմաստը, եւ մեր երեխաների, մեր սերունդների հպարտ ապագայ ունենալու նախադրեալը: Մենք դա իրաւունք չունենք մեր ձեռքից տալ, մենք ինչպէս կռուել ենք արիւնով ու հասել ենք այս 42 հազարին, այնպէս էլ, եթէ պետք լինի, էլի կը կռուենք ու արիւնով կը պահենք այս 42 հազարը: Ուրիշ ինդիք չկայ, այսքան պարզ է ամէն ինչ:

Մենք այսօր եկել ենք ձեզ դա ասելու: Մենք մեր սերնդին պետք է փոխանցենք մեր յաղթանակը, մեր ձեռքբերումները, մեր հպարտութիւնը եւ մեր լուսահոգի նահատակների յիշատակը, որոնք այս ամէնը ձեռք են բերել եւ նայում են մեզ երկնքից: Եւ ամենամեծ յիշատակը նրանց առջեւ հէնց դա է լինելու՝ իրենց արեամբ ձեռք բերուածը պահել ու փոխանցել իրենց սերունդներին՝ իրենց երեխաներին, թոռներին, ծոռներին: Այս հողը լիցք է տալիս մեզ, այս հողը մեզ աւելի դաշնակցական է դարձնում, աւելի հայ է դարձնում, աւելի ամուր ենք դառնում՝ մեր արմատներով կառչած մեր հողին: Եւ, ուրեմն, հէնց այսպէս էլ պետք է գնանք ու ամբողջ սփիւռքով, աշխարհով մէկ տարածենք, որ մենք անսասան ենք ու մենք յաղթելու ենք: Այս սերունդը պետք է յաղթի եւ սա է մեր պատմական առաքելութիւնը»:

\*\*\*

**Ձայն մը ինչեց Արցախի լեռներն**  
(Հատուած՝ 337 Բիւրոյի անդամ, Հայ դատի եւ քաղաքական հարցերի կենտրոնական գրասենեակի պատասխանատու Կիրո Մանոյեանի խօսքից):

Գուցէ ոմանց տարիքը մթազնել է իրենց յիշողութիւնը, գուցէ ոմանց տարիքը լեզուի սայթաքումի պատճառ է եղել, բայց ես ուզում եմ խօսել որպէս 1988 թուականի սփիւռքահայ: 1986 թուականին, երբ 75-85 թուականների հակաթուրք զինեալ պայքարը, կարելի է ասել, աւարտուել էր, սփիւռքի աշխուժ, հայրենասէր, գործունեայ երիտասարդութեան մօտ մի քիչ յուսախաբութիւն կար

Է, հիմա՞ ինչ պիտի անենք: Եւ արդէն 1987-ի վերջում, 1988 թուականին, «Ձայն մը հնչեց Արցախի լեռներէն»: Այդ շարժումը, որ վերածուեց ազատամարտի, նաեւ մեր՝ դաշնակցականներին մասնակցութեամբ, իսկապէս զարթօնք էր սփիւռքի համար: Եւ ես յիշում եմ, որ սփիւռքում, Շուշիի ազատագրումից առաջ, մենք պատրաստուում էինք Դաշնակցութեան մէկ այլ Ընդհանուր ժողովի, որը խափանուեց Երեւանում: Այդ ժամանակայ Զայաստանի նախագահը ԶՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Զրայր Մարուխեանին արտաքսեց երկրից: Ամէն դէպքում, արցախեան շարժումը եղաւ իսկապէս զարթօնքի, իսկապէս հպարտութեան շարժում: Այսօր չգիտեմ՝ ով ի՞նչ է յիշում, բայց մեր Նորագոյն պատմութեան մէջ Արցախը եւ Արցախի ժողովուրդը ունեն յատուկ տեղ, որովհետեւ, եթէ 130 տարի առաջ «Ձայն մը հնչեց Երզրումէն», ապա 30 տարի առաջ «Ձայն մը հնչեց Արցախէն»:

\*\*\*

**Դաշնակցութիւնը դաստիարակում է երիտասարդների, որոնց համար բարձունք գրաւելը հազար անգամ արեւի կարելու է, քան՝ Երեւանում խաչմերուկ փակելը**

*(Յատուած՝ ԶՅԴ անդամ, ԶԶ Գերագոյն խորհրդի նախկին պատգամաւոր Սէյրան Բաղդասարեանի խօսքից)*

Այս դահլիճում շատերս ենք դաշնակցական, իսկ բոլորս արցախցի ենք: Ես ուզում եմ Արցախի կառավարութեանը, Դաշնակցութեան եւ բազմաթիւ երկրներից այստեղ ժամանած պատուիրակութիւնների անուկից հաւաստիացնել՝ Դաշնակցութիւնն այդ 30 երկրում, բոլոր հայկական համայնքներում դաստիարակում է այնպիսի սերունդ, հայի այնպիսի տեսակ, որի համար Արցախը սրբազան հայրենիք է, սրբազան հող՝ լինի դա Աւստրալիայի, Քանադայի, Արժանթինի, Ուրուկուէյի, Ռուսաստանի, Լիբանանի, Պարսկաստանի թէ այլ երկրների հայութիւնը: Դաստիարակում են այնպիսի հայեր, որոնց համար Շուշիում բարձունքը գրաւելը եղել է մտում է հայոց սիրահանների ամենակարեւոր էջերից մեկը, այնպիսի երիտասարդներ, որոնց համար բարձունք գրաւելը հազար անգամ արեւի կարելու է, քան՝ Երեւանում խաչմերուկ փակելը: Այնպիսի հայեր, որոնք թողած իրենց տունը, տեղը՝ 90-ականների սկզբներին եկան, մասնակցեցին Արցախի պատերազմին. ձեզ հետ, սիրելի՛ արցախցիներ, մարտնչեցին, եւ ոմանք հանգչեցին այս սուրբ հողում: Մեզ բոլորիս համար, այս ժողովի մասնակիցների համար իսկապէս պատմական առիթ էր Արցախում անցկացնելը Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը: Սա սովորական քայլ չէր, երբ կուսակցութիւնը որոշեց, եւ դուք ընդառաջեցիք: Սա պատգամ էր ամբողջ հայութեանը, յարափոփոխ Զայաստանի իշխանութիւններին, որոնք ենթակայ են տարատեսակ գայթակղութիւնների կամ արտաքին ճնշումների այն մասին, որ Դաշնակցութիւնը եղել է, կայ եւ մտում է հայոց ազգային քաղաքական կեանքում սահման գծած եզակի քաղաքական ուժը, եւ այդ սահմաններից մէկը կոչուում է Զայ դատ, միւսը՝ Արցախ: Կարծում եմ՝ սա պատգամ է Զայաստանի բոլոր քաղաքական ուժերին, հայութեան բոլոր գործունեայ ուժերին, որպէսզի հասկանան՝ այն ծանր օրերը, որ այսօր սկսուել են, մուտք ամպերը, որ կուսակուրել են Արցախի գլխին՝ տարբեր տեսակ բանակցութիւնների, ճնշումների կամ տարբեր երկրներից եկող գայթակղութիւնների տեսքով. մենք պարտաւոր ենք միասնաբար յետ մղել դրանք: Կեցցե՛ք Արցախը, կեցցե՛ք արցախցին, կեցցեն հայութիւնն ու Դաշնակցութիւնը:

\*\*\*

**Կաղնին ամո՛ր է, կաղնին Արցախի հողից այս անգամ ջուր առաւ**  
*(Յատուած՝ ԶՅԴ Լիբանանի Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ, Լիբանանի խորհրդարանի պատգամաւոր Յակոբ Բագրատունու խօսքից)*

«Սահմաններն այլեւս կը հատուեն եւ աշխարհագրութիւնն իմաստ չի ունենայ եւ, հակառակ ամէն հաւածանքի, ամէն հարուածի՝ 129 տարի Դաշնակցութիւնն ամուր կառչած կը մնայ իր ժողովրդի համար ծնուած լինելու, իր ժողովրդի համար աշխատելու անսկուն կամքին: Այդ հսկայ կաղնին՝ հակառակ իր ճիւղերին հասցուած կացնի հարուածներին, շարունակում է ծլարծակել, իսկայանալ, բայց, մանաւանդ, այդ կաղնին կը հասնի իր հօր պարտեզը՝ Արցախ: Կը զգայ, որ այնտեղ է իր իսկական տեղը, այնտեղ, որտեղից կանչեց հողը, Արցախի ժողովուրդը, որպէսզի միասնաբար կարողանան պաշտպանել ոչ թէ Արցախը՝ Արցախի համար, այլ Արցախը՝ համայն հայութեան համար: Թերեւս մեզից ոչ ոք չէր երեւակայի տարիներ առաջ, որ Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը կարող է գումարուել Արցախում: Բայց պատմութեան ճակատագրական փուլն այնպիսին էր, որ մենք այսօր հպարտ Արցախի, հպարտ դաշնակցականների, հպարտութիւն ներշնչող Ընդհանուր ժողովը կը գումարենք: Վստահ եղէք, պարո՛ն նախագահ, սրբազան հայր, Արցախի մեր սիրելի՛ ընկերներ, որ Լիբանանի մեր կազմակերպութիւնը մէկ համեստ օղակն է համայն Դաշնակցութեան մեծ ընտանիքի, բայց այնտեղ, որտեղից պարտականու-



թիւնը կանչում է, մենք միշտ ներկայ ենք: Արցախը քաղցր է մեզ համար, Արցախը ամուր բերդ է, ամրո՛ց է: Եթէ Լիբանանից Միտրն ու Վիզելը նահատակուեցին, վստահ եղէք՝ որքան բազում-բազում ուրիշներ կան, որոնք պատրաստ են գալու, պաշտպանելու Արցախը, յաղթելու եւ, եթէ պէտք է՝ նահատակուելու: Դաշնակցութեան մէջ մենք սովորել ենք առաջ գնալ, ամուր մնալ, պինդ մնալ, չտկարանալ, փողերի առջեւ գլուխ չծռել: Կաղնին ամո՛ր է, կաղնին Արցախի հողից այս անգամ ջուր առաւ, Արցախի հողից սնուցուեց եւ, վստահաբար, այդ կաղնին պիտի ամրանայ Արցախի, Զայաստանի եւ հայութեան համար»:

\*\*\*

**Մայրս միշտ կ'ըսեր՝ «Որքան քաջ, այնքան՝ լաւ»**  
*(Յատուած՝ Միացեալ Նահանգներու ԶՅԴ Զայ դատի յանձնախմբի անդամ Բաֆֆի Զամբարեանի խօսքից)*

Պիտի փորձեմ ձեզի հետ քանի մը մտքեր բաժնել: Առաջինը այս է: Երբ Զայ դատը յաջող աշխատանք կ'ընէ, մենք Զայաստանի եւ Արցախի երկրորդ բանակն ենք: Մենք մեր աշխատանքը կ'ընենք, որպէսզի այդ առաջին բանակը կարենայ ապահով մնալ: Երկրորդ. դաշնակցականներս՝ մենք, տարբեր ենք մտքով, սրտով, ուժով: Եւ յարմարող կուսակցութիւն չենք: Երբ անձրեւ կու գայ, մենք հոն ենք, երբ ձիւն կու գայ, մենք հոն ենք, երբ որ դժուար օրեր կու գան, մենք հոն ենք: Մենք յարմարող կուսակցութիւն չենք: Եւ վերջինը, որը մայրս միշտ կ'ըսեր՝ «Որքան քաջ, այնքան՝ լաւ»: Այստեղ կանգնած ենք՝ Շուշի քաղաքին մէջ: Տղայ մը, որուն մեծ հայրը Տիգրանակերտն է, ես քաղաքէ մը կու գամ, ուր որ ուրիշ հայ չկայ: Տասնութ-տասնինը տարեկան, հայ լեզուով երեք բառ չէի գիտեր: Վերադառնալով 1991թ.՝ Երեւանի մէջ այս երիտասարդ տղան հիւանդանոց կը մտնէ, երրորդ կամ չորրորդ յարկը կ'երթամ, եւ դուռը կը բանամ, կը զարմանամ, որ գետինը այդքան մաքուր չէ, պատեն կախուած լոյս մը կայ, եւ պատանի աղջիկ մը, որուն անունը, մինչեւ այսօր կը յիշեմ, Լուսինէ էր: Լուսինէն 8 տարեկան էր. երբ հարցուցի, թէ ան ի՞նչ կ'ուզէ, պատասխանեց. «Ես ետ՝ տուն կ'ուզեմ երթալ»... Ես Արցախը այս ձեւով հասկցայ առաջին անգամ: Երբ դուռը գոցեցի, հասկցայ, թէ Արցախը ի՞նչ է: Երեք օր առաջ ականը Լուսինէին ոտքը առեր էր, այդ ոտքը ինք ետ չուզեց, բայց ուզեց ետ՝ Արցախ երթալ»:

\*\*\*

**Մեր միասնականութիւնը պէտք է անխախտ մնայ, վստահ եմ, որ պիտի մնայ**  
*(Յատուած՝ ԶՅԴ Բիւրոյի նախկին անդամ, լիբանանահայ վաստակաշատ մտաւորական, պատմաբան Երուանդ Փամպուքեանի խօսքից)*

«Պահը յուզիչ է, անշուշտ, Դաշնակցութիւնն իր առաջին Ընդհանուր ժողովն է գումարել Շուշիում, Ղարաբաղի լուսաւոր աստղ, Կովկասի աստղ՝ Շուշիում: Գիտե՞ք, հայ ազատագրական պայքարի տարիներին առաջիններից եղաւ Շուշին եւ, ընդհանրապէս, Ղարաբաղը, որ անգին մարտիկներ ուղարկեց Արեւմտահայաստանի ազատագրութեան համար: Մեծեր էին նրանք, կը կոչուէին Նիկոլ Դուման, Խանասորի Վարդան, Վանայ Նիկոլ Պօղոսեան եւ շատ ուրիշներ: Եւ զարմանալի չէ, որ Արցախի ազատագրութեան պայքարի առաջին հասնողներից եղան նաեւ սփիւռքի բոլոր կողմերի դաշնակցականները՝ կատարելու իրենց պարտքը, այս անգուզական, չքնաղ երկրամասում, որ Արցախ է կոչուում: Այս պահին միտքս եկաւ մէկ մոռացուած անգին հերոս Մռաւը՝ Մարգար Ժամհարեանը: Երիտասարդ, Երուպա ուսանած, վերադարձած՝ երկիր, այդ տարիներին, 1903-1904 թուականների մասին է խօսքը, Կովկասի ինքնապաշտպանութեան մարմինի անդամ: 1905 թուականի փետրուարին ժնջուում էր: Այդտեղ գումարում էր Դաշնակցութեան խորհրդի ժողովը, որը Դաշնակցութեան գերագոյն մարմինն էր, որ Ընդհանուր ժողովների միջեւ ընկած ժամանակաշրջանում կ'առնէր ամենավճռական որոշումները:

Իբրեւ անդամ՝ այդ ժողովներին ներկայանում էր ինքը, ինչպէս Զամօ Օհան-ջանեանը, Ռոստոմը, Վարանդեանը, Ակնունին եւ Դաշնակցութեան շատ ուրիշ պատմական դէմքեր: Փետրուար ամիսն էր, եւ առաջին լուրերը հասան Կովկասից: Պաքուի դէպքերն էին, հայ-թաթարական ընդհարումները սկսուել էին, եւ չկարողացան համբերել: Ժողովը հասաւ կէսին, Զամօ Օհանջանեանը եւ Մռաւը՝ Նոյն երիտասարդ, մտաւորական եւ, միաժամանակ, մարտական դէմք Մարգար Ժամհարեանը, վերադարձաւ եւ 1905 թուականի սեպտեմբերին, Շուշիի ինքնապաշտպանութեան կռիւների ժամանակ հակառակուէց: Սա ասում եմ, որովհետեւ մեծ թուով անզուգական հերոսներ նուիրուել են հայոց ազատագրութեան դատին: Չարմանալի չէ, ինչպէս ասում էի, Արցախի ազատագրութեան համար առաջին կոչին պատասխանողները եղան սփիւռքի բոլոր կողմերից եկած դաշնակցական տղաները, երիտասարդները: Սա խորհրդանշում է հայ ժողովրդի միասնականութիւնը՝ Արեւմտեան Զայաստան, Արեւելեան Զայաստան, Կովկաս, Պարսկահայաստան, դեռ սփիւռքի տարբեր-տարբեր երկրամասերում ապրող հայերը իրենք իրենց գալիս էին՝ հակառակ բոլոր տեսակի բռնապետութիւններին, որ բաժան-բաժան էին արել մեր ժողովրդին, գալիս էին, որովհետեւ իրենք պատկանում էին միեւնոյն ժողովրդին: Այս միասնականութիւնը պէտք է անխախտ մնայ, վստահ եմ, որ պիտի մնայ, եւ դրա ապացոյցը, վերջին 30 տարուայ ընթացքում, Արցախի մղած պայքարն է, որ դարձաւ ամբողջ հայութեան պայքարը: Կեցցե՛ք հայ ժողովուրդը, կեցցե՛ք նրա միացեալ կամբը»:

\*\*\*

**Խենթերը, որոնք կ'երազէին Զայաստանի վերանկախացման մասին**  
*(Զատուած՝ ԶՅԴ Արեւմտեան Ամերիկայի շրջանի Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ Աւետիք Իզմիրլեանի խօսքից)*

«Ես շատ լաւ եմ յիշում, որ 30 տարի առաջ, Յունաստանում, ԶՅԴ 24-րդ Ընդհանուր ժողովում, երբեմնի «Դէպի Երկիր» կարգախօսը վերականգնուէց: Այս սրահում այդ ժողովին ներկայ 4 ընկերներ կան՝ ընկերներ՝ Երուանդը, Մարիոն, եւ եւ ընկեր Զրանդը: «Դէպի Երկիր» ասացինք... 70 տարի շարունակ սփիւռքում մեզ կոչում էին խենթեր, խենթեր, որոնք կ'երազէին Զայաստանի վերանկախացման մասին... Եւ խենթերի երազած վերանկախացումն իրականացաւ: Խենթ էինք 70 տարի շարունակ եւ այսօր էլ խենթ ենք, որովհետեւ երազում ենք Միացեալ Զայաստան եւ ես վստահ եմ, որ եթէ կարողանանք պահել Միացեալ Զայաստանի առաջին փուլի ձեռքբերումը՝ Արցախը, ապա կը հասնենք մեր երազած Ազատ, Անկախ եւ Միացեալ Զայաստանին»:

\*\*\*

**Դաշնակցութիւնն ու Արցախը բնական դաշնակիցներ են**  
*(Զատուած՝ ԶՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ, Արցախի խորհրդարանի պատգամաւոր Դաւիթ Իշխանեանի խօսքից)*

«Պիտի ասեմ, որ ինչպէս 30 տարի առաջ, այսօր էլ ԶՅԴ Արցախի կառոյցի եւ մեր ընկերների վիճակը բաւականին երկիմաստ է: Մէկ կողմից կուսակցական պարտականութիւններն են, միւս կողմից՝ պետական հանգամանքներն ու պարտականութիւնները: 30 տարի առաջ անդամագրուելով Դաշնակցութեանը՝ կարեւոր փորձառութիւն ենք ստացել: Բարեբախտաբար այն սերունդն ենք, որ առարկայական, եւ ոչ տեսական ձեւով անցել ենք այն տարիներն ու ժամանակաշրջանը, որին միայն գրքերում կարելի էր հանդիպել: Նաեւ մի կարեւոր հանգամանք կար. երբ մենք, մեր պատկերացումների մէջ, փորձում էինք փոխել խորհրդային պատմագրութեան հրամցրած պատկերացումները Դաշնակցութեան մասին: Դժուար էր այդ անելը: Այնուհետեւ համոզուեցինք, որ Դաշնակցութեան մասին մեր իրական պատկերացումները նաեւ մեզանով պէտք է փոխանցենք: Զայ յեղափոխականների դաշնակցութիւն, սա է առաջին միտքը, որ մենք ստացանք եւ ծանօթացանք: Այնուհետեւ այն վերածուէց Զայ յեղափոխական դաշնակցութեան: Գերագոյն նպատակը պետականութիւն ունենալն էր՝ Զայաստանի Ա. Զանրապետութիւն, այնուհետեւ, խորհրդային 70 տարիներից յետոյ, Զայաստանի եւ Արցախի հանրապետութիւններ, ազատամարտ, յաղթանակ եւ առաքելութիւն: Ես այսօր ժողովի ընթացքում բարձրաձայնեցի մի կարեւոր բանաձեւում, որ տարիներ ի վեր դարձել է ոչ միայն Դաշնակցութեան սեփականութիւնը, այլեւ՝ Արցախի իշխանութիւնների եւ պետութեան՝ Դաշնակցութիւնն ու Արցախը բնական դաշնակիցներ են... Եւ այդ հանգամանքը մեր վրայ դնում է առաւել նոր պարտաւորութիւններ եւ պատասխանատուութիւն: Այն մարտահրաւերները, որ մեր առջեւ են ծառայած, այս կարեւոր դաշինքով մենք պէտք է կարողանանք յաղթահարել, ինչպէս՝ 25-30 տարի առաջ: Եւ այս ամենը հնարաւոր է, կարծում եմ, այն համեստութեամբ եւ կարեւոր առաքելութեամբ, որ ամէն մէկս իր վրայ կրում է՝ երկրի գերագոյն գլխաւոր հրամանատարը, երկրի նախագահը, պաշտօնեան, կուսակցական պատասխանատուն, Բիւրոյի անդամը բնութագրուում են պարզ, համեստ մէկ բառով՝ զինուոր լինելու հանգամանքով: Բանակը՝ մեր կարեւոր երաշխաւորը, դարձել է ոչ միայն մեր սահմանների եւ պետութեան անվտանգութեան, այլեւ մեր ժողովրդի գարգացման հիմնական եւ գլխաւոր երաշխաւորը: Իւրաքանչիւրս իր մէջ կրում է այդ համեստ կերպարը՝ զինուոր հասկացողութիւնը»:

\*\*\*

**ՅԱՐԸ-ն ԶՅԴ-ի հոգեգաւակն է**  
*(Զատուած՝ «Զայ մարմնակրթական ընդհանուր միութեան Կենտրոնական վարչութեան ատենապետ Գառնիկ Սկրտիչեանի խօսքից)*

«Յանուն ՅԱՐԸ մեծ կազմակերպութեան՝ այսօր եկել եմ ասելու, որ ՅԱՐԸ-ն իր հարիրամեակը տօնեց անցեալ տարուայ յուլիսին: Այդ օրերին մենք յայտարարեցինք, որ մեր պատմութեան հարիւր տարուայ ուղիղ կէտը՝ 50 տարին, գործել ենք Զայաստանում, որից 30 տարին՝ Դաշնակցութեան վերընծիւղումից յետոյ, իսկ դրանից առաջ 20 տարին՝ Պոլիսից եկած մեր գործիչներով: Նրանք, որոնք մտահոգ են, որ ՅԱՐԸ-ն գործում է առանց ԶՅԴ-ի, շատ են սխալուում: Մենք միշտ յայտարարել ենք եւ յայտարարում ենք, որ ՅԱՐԸ-ն ԶՅԴ-ի հոգեգաւակն է: Դա մեր համար հպարտութիւն է, դա մեզ համար պատիւ է, եւ դա մեզ համար միշտ գործունեութեան լայն դաշտ է: Գործում ենք 26 երկրում: Պարոն նախագահ, ձեզ խոստացել ենք՝ գործել նաեւ Արցախում... Ես իզուում եմ այսօր, այս բեմից յայտարարել՝ ճիշդ է, Զայաստանում գործում ենք 30 տարի, իսկ օտար ափերում ներկայացնում ենք Զայաստանը, բայց ես ձեզ վստահեցնում եմ, որ ՅԱՐԸ-ն շատ մօտ ապագայում կը գայ Արցախ, պիտի գործի Արցախում եւ հպարտութեամբ պիտի ասի՝ ՅԱՐԸ-ն Արցախի հողում է»:

\*\*\*

**ՅՕՄ-ը գիտի՝ ո՛ր պէտք է հասնի եւ որքա՛ն արագ պէտք է հասնի**  
*(Զատուած՝ Զայ օգնութեան միութեան Կենտրոնական վարչութեան անդամ Լիզա Աւագեանի խօսքից)*

«Սա մեծ պատիւ է Զայ օգնութեան միութեան՝ ՅՕՄ-ի համար, որովհետեւ սա փաստում է, որ մենք հոգով ու սրտով համաձայն ենք ԶՅԴ առաքելութեանը՝ հայ ժողովրդի համար, եւ գործում ենք այդ առաջադրանքով: Մենք սկսել ենք գործել 1910 թուականից ի վեր՝ միշտ հայ ժողովրդի համար եւ նրա կողքին, եւ այնտեղ, որտեղ զգացուել է ՅՕՄ-ի կարիքը՝ սկսած ամենահին ժամանակներից՝ անցնելով Լիբանանի պատերազմով, անցնելով Սպիտակի երկրաշարժով, Արցախի պատերազմով, Զայաստանի անկախութեամբ, սիրիահայութեան խնդիրներով եւ մինչեւ օրս՝ ո՛ր որ կարիքը կայ: ՅՕՄ-ը գիտի՝ ո՛ր պէտք է հասնի եւ որքա՛ն արագ պէտք է հասնի: Մենք առաջին օրուանից ունեցել ենք որբախնամ ծրագիրը, որն առաջին հերթին օգնել է մեր զինուորների, մեր ֆիտայիների երեխաներին, եւ որը շարունակուում է մինչեւ օրս: Ունենք «Սօսէ» մանկապարտէզներ, մինչեւ վերջերս դրանց թիւը 12-ն էր, իսկ այսօր՝ 8-ը, եւ վստահ եմ, պարոն նախագահ, կը համաձայնեք, որ այդ գործի գագաթնակէտն է Ստեփանակերտի նորակառոյց մանկապարտէզը: Վստահեցնում եմ, որ սփիւռքի մեր գաղութները նոյնանման մանկապարտէզ չունեն, եւ մենք հպարտ ենք, որ դա կառուցեցինք հէնց Ստեփանակերտում: Մէկ անգամ եւս կոչ եմ անում ձեզ, յատկապէս՝ արտասահմանի մեր ընկերներին, որ միշտ կանգնեք ՅՕՄ-ի կողքին, նրա ծրագրերի կողքին, եւ վստահ եղէք, որ այդ ծրագրերը միշտ ծառայում են՝ հաւատարիմ առաքելութեանը՝ առաջին օրից մինչեւ այսօր: ՅՕՄ-ը ունի հայ ժողովրդի, յատկապէս սփիւռքի կարիքը, որպէսզի կարողանանք Զայաստանում, Արցախում եւ Զաւախքում իրականացնել ազգային նպատակները»:

\*\*\*

**Զամազգայինը Արցախի համար**  
*(Զատուած՝ Զամազգային հայ կրթական եւ մշակութային միութեան Կենտրոնական վարչութեան ատենապետ Սկրտիչ Սկրտիչեանի խօսքից)*

«Արդէն 2 տարի է Զամազգայինի համեստ գրասենեակն Արցախում սկսել է գործել՝ դանդաղ, բայց հաստատուն քայլերով: Առայժմ զբաղուում է երիտասարդութեան մշակութային դաստիարակութեամբ, հաճելի մթնոլորտում, յաջող կերպով: Արդէն մէկ գիտաժողովի ծրագիր ունենք, սկսել ենք գործել սահմանամերձ շրջաններում եւ, ինչ-որ տեղ, առաջադիմութեան նշան է, որ շուտով փոքր գրասենեակից կը տեղափոխուենք աւելի մեծ գրասենեակ: Դա նշան է, որ մեր գործունեութիւնն առնուազն պիտի կրկնապատկուի: Խօսք եմ տալիս, որ կարճ ժամանակի ընթացքում Զամազգայինի գործունեութիւնն Արցախում հասնելու է այն աստիճանի, որ աւելի արժանավայել ձեւով է ծաւալուելու գործակցութիւնն Արցախի մշակոյթի նախարարութեան, ինչպէս նաեւ համալսարանի հետ»:

\*\*\*

**Արցախը մեր Ստալինկրատն է**  
*(Զատուած՝ ԶՅԴ Զայ դատի Կենտրոնական խորհրդի անդամ, Ընկերվար Միջազգայնականում ԶՅԴ ներկայացուցիչ Մարիօ Նալպանտեանի խօսքից)*

«Մենք դաստիարակուած ենք այս հայրենասեր, ազգասեր, յեղափոխական ընտանիքում: Մեզ ասել են, որ Արցախը պիտի լինի մեր Ստալինկրատը: Ստալինկրատի վերածուէց Արցախը մայիս 8-ին, մայիս 9-ի լուսաբացով՝ Շուշիի յաղթանակով, եւ այդ յաղթանակը մինչեւ օրս ոչ միայն մեզ հպարտացնում է, այլեւ պարտաւորեցնում՝ զիտակցելու յաղթանակի իմաստը եւ ապահովելու դրա անշրջելիութիւնը: Այս վերջին մի քանի օրերի ընթացքում, երբ քաղաքական մեր քննարկումները կը կատարէինք, եւ «ծովի ալիքների» մասին կը խօսէինք, մէկ բառ էր շատ շօշափուում՝ բնութագրելու համար ներկայի որոշ անցանկալի երեւոյթներ՝ «տեժա վիւ»: Եւ եթէ մենք «տեժա վիւ» պիտի ապրենք անմիջական ապագայում, ապա կրկին դուրս կը գանք միասնական ու յաղթանակած՝ այն հաւատքով, որով Ստալինկրատը վերածուէց Շուշիի»: